

Ձ. ՍՏԵՅՆԵՐԿԻ ՆԱՄԱԿԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ

Ինչպես հայտնի է, ամերիկացի նշանավոր գրող Ջոն Ստեյնբեկը 1963 թ. աշնանը եղավ Սովետական Միությունում, այցելեց նաև Հայաստան, ուր մասնակցեց Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի տոնախմբությանը:

Հայրենի վերադառնալուց հետո, Ստեյնբեկը Սովետական Հայաստանի գրողներին հոնք մի ամակ. որը տպագրվում է ստորև:

ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ

Սիրելի բարեկամներ.

Ես մտադիր էի առանձին-առանձին գրել Ձեր բոլորին, որպեսզի շնորհակալություն հայտնեի այն հյուրընկալության և սիրալիրության համար, որով ընդունեցիք մեզ՝ վերջերս կատարած մեր շրջագայության ժամանակ: Բայց երբ սկսեցի մտաբերել այն բազմաթիվ մարդկանց, որոնք մեր բարեկամներն են

Armenia has left a mark on us. A rich and beautiful country -- is it any wonder that it aroused the greed of invaders? But, while Armenia is a fruitful land, it is also a fortunate land in having a people who know its beauty with such passion that their love tempered by so many centuries of fire and fury, this iron love is Armenia's strength, so that the land is blessed by the people and the people by the land.

We caught this feeling from you and we thank you for it, because we know we will never be strangers in Armenia.

Yours,

*John Steinbeck*

դարձել, իսկույն ըմբռնեցի, որ այդպիսի ծրագրի իրականացումը մի քանի տարի կպահանջի: Կան նաև այլ դժվարություններ: Անտարակույս, պետք է որ գրելի մեծ նկարչին՝ Սարյանին և նրա ընտանիքին, բայց ի՞նչ ձևով պետք է շնորհակալություն հայտնեի այն գյուղացի մարդկանց, որոնք անուշ սուփրափուկ խոտի վրա՝ լեռներում, կամ այն գույզին, որ մեզ սառն ու քամի խաղողահյութով հյուրասիրեց բարձրաբերձ տանուրի մոտ:

Ես նրանց անունն անգամ չգիտեմ, բայց կուզենայի, որ նրանք իմանան, թե որքան նշանակալից տեղ են գրավում մեր հիշողություններում:

Մենք այնքան շատ բան ենք հիշում և անշափ հանույժով ու ջերմությամբ... Երգերը՝ սեղանի շուրջ. վանքի՝ անհավատալի, ժայռափոր, վեհ զսիականոր՝ ծոված խոր կիրնի վրա, որտեղով հոռմեական լեզեռներն են փայլել, և՛ լուսաբացի տեսքը Արարատ լեռան, և՛ այն, թե ինչպես էր փոխվում նա հետմիջօրեին, և՛ Սայաթ-Նովայի Երգերի բառերը, որ անծանոթ էին մեզ, բայց անշափ փաղցրահնչուն:

Վերհիշում եմ Երևանի հնամյա փառքը՝ լեռան շափ բարձրացած իր սերունդներով, և նրա հարատևումը... Սիրելի մի Երկիր, սիրելի մի ժողովուրդ. և հարատևող... Դեռ է գլխավորը, հարատևումը...

Մենք հիշում ենք, այո, այն միտքը, որ մեր ճանապարհորդության ընթացքում զայիս էր շուր ածելու պես... Չնայած մեզ բաժանող մղոններին ու օվկիանոսներին, չնայած բարձր, զաղափարախոսության, մեքողների ու տեխնիկաների, պատմությունների ու ծագման, կենսափորձերի ու հիշատակների զանազանության, այն ամենի, որոնք պետք է որ տարբերվեն մեզ, այնուամենայնիվ, մենք ավելի շատ նման ենք իրար, քան իրարից տարբեր:

Ազնվությունը ինտերնացիոնալ է, միջցեղային:

Ազնվության համար լեզու անհրաժեշտ չէ, որովհետև ինքնին մի լեզու է:

Ոչ, տարբեր չեն մեր իդեոն ու կարիքները: Ի՞նչ են դրանք. խաղաղություն, բարեկամություն, բավարար բարեկեցություն՝ տվյալաճառի հետո պահելու մեզանից, ապա իրավասություն, ժամանակ, ուժ և կամք բոլոր մարդկանց համար, որպեսզի ապրեն ու ձգտեն իրենց կարողությունների բարձրացումը զազաթին:

Այդ ենք ուզում մենք և դուք... Բարեբեկ մի աշխարհ, որ չաղնատվի շարամտությամբ կամ տագնապից աղմուկով, մի դոնրաց աշխարհ, ուր երեսխաները կարողանան արտաֆնապես ծիծաղկոտ մեծանալ և ներհնապես՝ ոչ վիրավորված, ոչ էլ խոժոռ:

Եվ եթե այս ամենով մենք նման ենք իրար, էլ ինչո՞ւ զարմանալ, որ մենք սիրալիր ընդունելության ու վերաբերմունքի արժանացանք Երևանում:

Հայաստանն իր հետքը դրոշմեց մեզ վրա: Հարուստ և չճանաչ մի Երկիր է նա: Էլ ինչո՞ւ զարմանալ, որ զրգոել է ներխուժողների ազահությունը: Սակայն. եթե Հայաստանը բարեբեկ մի Երկիր է, ապա նաև բախտավոր է, որ ունի մի ժողովուրդ, որ կրճատությամբ զիտակցում է նրա զեղեցկությունը և իր սերն է խփել հրե ու ցասումնալի դուրերի փորձափարին: Այդ Երկաթյա սերն է Հայաստանի ուժը, այնպես, որ Երկիրն օրհնված է իր ժողովրդից և ժողովուրդը՝ իր Երկրից:

Այս զգացումը մենք վերցրինք Ձեզանից, և շնորհակալ ենք դրս համար. որովհետև գիտենք, թե էլ երբև օտարներ չենք լինելու Հայաստանում: